

## **ՀՀ Քրեական օրենսգրքի 205 հոդվածում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ**

Սեդրակ Ասատրյան  
փաստաբան, «Կոնցեռն-Դիալոգ» փաստաբանական գրասենյակի տնօրեն

Արամ Օրբելյան, ի.գ.թ.  
փաստաբան, «Կոնցեռն-Դիալոգ» փաստաբանական գրասենյակի ավագ գործընկեր

### **Դիտողություններ**

Քրեական օրենսգրքի 205 հոդվածում փոփոխություններ նախատեսող նախագիծը առաջին հայացքից տպավորություն է ստեղծում, որ պետությունը կարծես փորձ է անում պատժիչ գործողությունները մեղմացնել կիրառելով առաջադեմ երկրներում ընդունված խախտումն արձանագրելուց առաջ զգուշացնելու մեթոդը, սակայն ՀՀ իրավակիրառ պրակտիկայի լույսի ներքո դա կարող է բերել գործարար միջավայրի էական վատթարացման: Վստահ ենք, որ նախագծի հեղինակները հետապնդել են բարի նպատակներ, բայց ցավոք բերված հիմնավորումները ցույց են տալիս, որ նախագիծը գրելուց թեև հաշվի են առնվել մի շարք երկրների օրենսդրությունը, սակայն չի վերլուծվել ՀՀ Քրեական օրենսգրքի 205 հոդվածի կիրառման պրակտիկան և դրա հետ կապված խնդիրները:

Սույն նախագիծը նախատեսում է մտցնել նախազգուշացման ինստիտուտ այն է լիազոր մարմնի կողմից հարկերից չարամտորեն խուսափելու դեպքեր հայտնաբերելուց զգուշացնել տնտեսվարողին դրանք վերացնելու մասին նոր հետո հարուցել քրեական գործ: Բարի, եթե խոսքը գնում է ակնհայտ դիտավորության մասին, այսինքն հայտնաբերվել է մի այնպիսի դեպք, երբ հստակ երևում է, որ կեղծ փաստաթղթերով շահութահարկից նվազեցումներ է կատարել, կամ ակնհայտ կեղծ փաստաթղթերի միջոցով դեբետագրել է ավելացած արժեքի հարկը այս դեպքում գուցե աշխատի նախազգուշացման ինստիտուտը, բայց հիմնական խնդիրը չպետք է այստեղ փնտրել:

Այսպիսով, **նախագծի հեղինակների կողմից առկա իրավակիրառ պրակտիկայի և դրա հետ կապված խնդիրների որևէ էական վերլուծություն չի կատարվել**, կամ դա առնվազն բացակայում է փաստաթղթերի փաթեթում (205-րդ հոդվածի հիման վրա հարուցված գործերի քանակ, ավարտին հասցված գործերի քանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով ազատվել է քրեական պատասխանատվությունից և այլն), ինչի հետևանքով էլ նախագիծը չի անդրադառնում առկա խնդիրներին:

Առաջարկվող նախագծի վերաբերյալ կարծիք և դիտողություններ ներկայացնելու համար նախնառաջ անհրաժեշտ է ուշադրություն հրավիրել նախագծի հիմնավորմանը, որտեղ բազմաթիվ անգամ շեշտվում է «պետական բյուջեի ձևավորման» ապահովման կարևորությունը: Կիսելով հեղինակների կարծիքը առ այն, որ պետական բյուջեի ձևավորումը անհրաժեշտ է պետության բնականոն գործունեության համար, պետք է հաշվի առնել, որ նշված նպատակին կարելի է հասնել մի շարք այլ, ավելի ցածր միջամտություն դրսևորող գործիքների միջոցով:

ՀՀ իրավական համակարգում ի հավելումն քրեական-իրավական ներգործության միջոցների, կարող են նախատեսվել ներգործության այլ գործիքներ նույնպես, ինչպես օրինակ՝ վարչական պատասխանատվության (ՎԻՎՕ կամ այլ օրենքներ, օրինակ հարկերի մասին օրենք), քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցներ և այլն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի լույսի ներքո օրենքների համապատասխանությունը Սահմանադրությանը որոշվում է ոչ միայն նպատակների ընդհանուր առմամբ իրավաչափ լինելով (այս դեպքում հարկեր հավաքելը իրավաչափ է), այլ նաև միջամտության գործիքների համաչափությամբ: Ընդ որում, եթե նպատակին հնարավոր է հասնել միջամտության տարվեր չափ ունեցող գործիքներով, ապա իրավաչափ կհամարվի այն միջոցների կիրառումը, որոնք առաջացնում են նվազագույն միջամտություն: Եվ ընդհակառակը, առավել միջամտող գործիքները, եթե նույնիսկ դրանք ուղղված են իրավաչափ նպատակի, կլինեն անհամաչափ և հետևաբար կհամարվեն ոչ իրավաչափ:

Նախագծի հիմնավորման մեջ նշված է, որ հարկերի հավաքագրումն ապահովելու նպատակով, ի հավելումն քրեական օրենսգրքի 205 հոդվածի կարգավորման, առկա են նաև մի քանի զանցակազմեր Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում: Նշված նպատակին են ուղղված նաև առանձին հարկերին վերաբերվող առանձին օրենքներում նախատեսված վարչական իրավական ներգործության մի շարք դրույթներ (ուշացումով վճարելու կամ սխալ հաշվարկելու համար նախատեսված տուգանքներ և տույժեր): Այս համատեքստում անհրաժեշտ է գնահատել, թե նշված միջամտության գործիքներից որոնք են կարող առավել ցածր միջամտությամբ ապահովել իրավաչափ նպատակների իրականացումը:

Անդրադառնալով կոնկրետ 205 հոդվածին, անհրաժեշտ է նշել, որ առկա խնդիրները ավելի շատ կապված են հենց նրա կիրառման պրակտիկայի հետ. այն անջատվել է քրեական օրենսգրքի խնդիրներից ու նպատակներից և «ընդգրկվել է» հարկահավաքության անմիջական գործիքակազմում, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում ամրագրված իրավական պետության սկզբունքներին վերը բերված հիմնավորմամբ:

Բազմաթիվ են դեպքերը, երբ հարկային մարմնի կողմից ստուգման արդյունքում առաջադրվում է որևէ հավելյալ «ենթադրյալ» հարկային պարտավորություն: Ընդ որում ստուգման ակտի հիմքում հաճախ դրված է լինում ոչ թե փաստական տվյալների ոչ

հավաստի լինելը, այլ օրենքի տարբեր դրույթների մեկնաբանության հետ կապված տարաձայնությունները (օրենքի դրույթների մեկնաբանությունները, հաճախ օրենքին չհամապատասխանող պաշտոնական կամ ոչ պաշտոնական մեկնաբանությունների, հրահանգների, պարզաբանումների (չ)կիրառման խնդիրը – իրավական վեճ): Եթե տնտեսվարողը վճարում է տուգանքը (անկախ դրա հետ համաձայն լինելու կամ չհամաձայնելու հանգամանքից), ապա նա խուսափում է հետագա խնդիրներից: Սակայն, եթե տնտեսվարողը որոշում է բողոքարկել համապատասխան ակտը և ենթադրյալ «չվճարված» հարկերի գումարը գերազանցում է 2 մլն ՀՀ դրամը, ապա գործը փոխանցվում է Ֆինանսների նախարարությունում գործող քննչական մարմին, որը սովյալ տնտեսվարողի տնօրենի կամ այլ պատասխանատու անձանց նկատմամբ սկսում է արդեն քրեական հետապնդում («պարզելու արդյոք առկա է հանցագործություն»):

Այս համատեքստում հատկանշական է «Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանի հարցմանն ի պատասխան ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալ Տ. Բարսեղյանի գրությունը, որի 4-րդ կետում նշված է, որ

*«համաձայն սահմանված կարգի բոլոր այն ստուգման արդյունքները, որոնցով որպես հարկի կամ վճարի վճարման ենթակա գումար արձանագրվել է նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը գերազանցող գումար, ու տնտեսվարող սուբյեկտը չի վճարել ակտով առաջադրված հարկային պարտավորությունը, ապա սովյալ տնտեսվարողի գործողություններում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված հանցագործության հանցակազմի տարրերի առկայությունը կամ բացակայությունը պարզելու, ինչպես նաև ստուգման ակտի կազմումը՝ կազմակերպության հաշվապահական փաստաթղթերին և սովյալ պահին գործող նորմատիվային ակտերի պահանջներին համապատասխանելու հանգամանքները ճշտելու նպատակով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի [հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը] կարգով, իրականացվում են անհրաժեշտ դատավարական գործողություններ, որի արդյունքում տրվում է համապատասխան իրավական գնահատական: **Վճարված ակտերը լրացուցիչ ուսումնասիրման առարկա չեն դարձվում:**»*

(գրության պատճենը կցված է, ինչպես նաև հասանելի է [http://taxpayers.am/images/M\\_images/Legislation/letters/reply%20to%20letter%20006%202014%20from%20taxservice.pdf](http://taxpayers.am/images/M_images/Legislation/letters/reply%20to%20letter%20006%202014%20from%20taxservice.pdf)

համացանցային հասցեում – 09.12.2014):

Այսպիսով, մեծ է հավանականությունը, որ 205-րդ հոդվածի փոփոխությունների արդյունքում այն առավել կամրապնդվի որպես հարկահավաքության գործիք և էլ ավելի կխորանան առկա խնդիրները:

Ավելի հստակ պատկերացում կազմելու համար իրավակիրառ պրակտիկայում առկա խնդիրներից, ստորև ներկայացված է որոշակի փոփոխված իրական դեպք:

Այսպես՝ համաձայն շահութահարկի մասին ՀՀ օրենքի 39 հոդվածի՝

*«Եթե օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի (բացառությամբ բանկերի նվարկային կազմակերպությունների) կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների փաստացի կատարած ներդրման ընդհանուր արժեքը 1998 թվականի հունվարի 1-ից հետո կազմում է առնվազն 500 մլն դրամ, ապա սովյալ ռեզիդենտի շահութահարկի գումարը նվազեցվում է՝ /նվազեցում ըստ օրենքում գետեղված աղյուսակի է/:*

Պատկերացնենք իրավիճակ երբ Հարկային տեսուչը արձանագրում է, որ օտարերկրյա ներդրողի կանոնադրական կապիտալում թեպետ առկա է պահանջված չափի ներդրումը, կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով գրանցված է պետության կողմից վարվող պետական ռեգիստրում, բայց բանկային փոխանցման մեջ նպատակը նշված չէ որպես «ներդրում»: Հարկային մարմինը այս հիմնավորմամբ ստուգման ակտով արձանագրում է մոտ 100 մլն դրամի խախտում, իսկ տնտեսվարողը համաձայն չէ այդ արձանագրության հետ և բողոքարկում է այն վերադաս մարմին կամ դատարան: Ի՞նչ կպատահի այս դեպքում առաջարկվող փոփոխությունից հետո: Լիազոր մարմինը կնախագգուշացնի տնտեսվարող սուբյեկտին, որից հետո կհարուցի քրեական գործ 205 հոդվածի հատկանիշներով: Այսինքն այս նախագծով նախատեսված փոփոխությունները նույնիսկ կօրինականցնեն ստուգողի ոչ իրավաչափ գործողությունները: Իսկ թե ինչ կլինի շարունակությունը կարծում եմ հարկ չկա երկար նկարագրել կամ տնտեսվարողը պիտի բիզնեսի շրջանառությունից հանի /եթե ունի այդպիսի հնարավորություն/ ու վճարի ակտով սահմանված գումարը ու հետո զբաղվի բողոքարկման գործընթացով կամ եթե սկսի բողոքարկման պրոցես առանց վճարման տնօրենի նկատմամբ ամենայն հավանականությամբ կկիրառվի նախնական կալանք (քանի որ «ազատության մեջ մնալով կարող է փոփոխել փաստաթղթերը և խոչնդոտել գործի օբյեկտիվ և բազմակողմանի քննությանը») և անձը առնվազն որոշ ժամանակով կազատագրվի:

Վերը նշվածի լույսի ներքո անհրաժեշտ ենք համարում արձանագրել նաև հետևյալը: Գործնականում 205 հոդվածով հարուցված գործերի մեծ մասի դեպքում **արդեն իսկ առկա է վարչական ակտ, որը չբողոքարկելու (անվիճելի դառնալու), կամ բողոքարկման դեպքում՝ բողոքը չբավարարելու դեպքում, բավարար է հարկերը բռնագանձելու համար:** Այսինքն այն իրավաչափ նպատակը (հարկերի հավաքագրումը), որը հետապնդում է 205-րդ հոդվածը, իրականում կարելի է իրականացնել առավել մեղմ (սակայն ոչ պակաս արդյունավետ) միջամտության միջոցով, այն է վարչական ակտը ընդունելու և այն հարկադիր կատարելու միջոցով:

Այսինքն, քրեական օրենսգրքում իրականում ոչ թե խոսքը պետք է գնա **հարկերը չվճարելու մասին, այլ՝ հարկեր վճարելուց խուսափելու մասին (փաստաթղթեր կեղծելու, և այլնի միջոցով):**

Եվ արդյունքում քրեական օրենսգրքի շրջանակներում պետք է քննվեն միայն այն գործերը, որոնք անհնար է քննել վարչական վարույթի (ստուգումների) շրջանակներում (ընդ որում հենց անհնար է, այլ ոչ թե բարդ է, ցանկալի չի և այլն): Ընդ որում 205 հոդվածի համաձայն քրեական գործեր քննելիս պետք է կիրառվի ոչ թե ստուգումների հետ կապված ընթացակարգեր (վերստուգում և այլն), այլ քրեական դատավարությանը բնորոշ ընթացակարգեր (ապացույցների առգրավում, անձանց հարցաքննում, փորձաքննություն, օպերատիվ հետախուզական գործողություններ և այլն՝ ապահովելով պատշաճ դատական վերահսկողություն):

Միննույն ժամանակ համապատասխան փոփոխությունները կատարելու համատեքստում պետք է հաշվի առնել նաև պատժի անխուսափելիության սկզբունքի հիման վրա ձևավորված այն մոտեցումը, որ **լայն տարածված երևույթները չպետք է քրեականացվեն** /ավելին դրանք պետք է ապաքրեականացվեն – եթե նույնիսկ դրանք ունեն հանրային վտանգավորության բարձր աստիճան/ (տե՛ս օրինակ, Антонов А.Д. *Теоретические основы криминализации и декриминализации: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук*. М., 2001).

Այսպիսով առավել արդյունավետ կարող է լինել կամ խոշոր համարվելու շեմի (2 մլն դրամ) էական բարձրացումը (ինչը պրակտիկայում կապաքրեականացնի 205 հոդվածը գերփոքր բիզնեսի համար) և սահմանվի առնվազն 50 մլն ՀՀ դրամ, իսկ առավել արդյունավետ կլինի 100 մլն ՀՀ դրամի<sup>1</sup> շեմի սահմանումը, կամ նշված արարքի լրիվ ապաքրեականացում և դրա փոխարեն վարչական գործիքակազմի արդյունավետ կիրառում: Կարելի է քննարկել վարչական գործիքակազմի արդյունավետության բարձրացմանն ուղղված գործողություններ:

Ինչ վերաբերվում է հանցագործության կատարված լինելու պահին, իրականում դա հենց հարկեր վճարելուց խուսափելու փորձի պահն է (երբ տրվում է ակնհայտ կեղծ հաշվետվությունը, կամ ստուգում իրականացնող մարմնին տրվում է կեղծ փաստաթուղթ և այլն), այլ ոչ թե հարկեր չվճարելու պահը, քանի որ իրականում այդ հանցագործության ոտնձգության օբյեկտը պետք է լինի ոչ թե հարկեր վճարելու իրավահարաբերությունները, այլ տնտեսական գործունեության մասին ճշգրիտ տվյալներ տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները, որոնք որպես հավելյալ բացասական հետևանք բերել են վճարված հարկերի նվազեցմանը:

Ըստ այս նախագծի հիմնավորման ասվում է չարամտորեն եզրույթը հայեցողական է, այն պետք է գնահատվի հարց է առաջանում ով պետք է գնահատի, ինչ

<sup>1</sup> «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի (ՓՄՁ սուբյեկտներ) համաձայն՝

«1. Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են՝

1) **գերփոքր**՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա **գործունեությունից ստացված հասույթը** կամ նախորդ տարեվերջի դրությամբ **ակտիվների հաշվեկշռային արժեքը** չի գերազանցում **100 մլն դրամը**.

2) փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից **ստացված հասույթը** կամ նախորդ տարեվերջի դրությամբ **ակտիվների հաշվեկշռային արժեքը** չի գերազանցում **500 մլն դրամը**.

3) **միջին**՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից **ստացված հասույթը** կամ նախորդ տարեվերջի դրությամբ **ակտիվների հաշվեկշռային արժեքը** չեն գերազանցում համապատասխանաբար **1500 մլն դրամը և 1000 մլն դրամը:**»

չափորոշիչներով, որպեսզի արարքը համարի չարամտորեն կատարված ու նախազգուշացնի:

Ամեն դեպքում չարամտության (դիտավորության) և հանցագործության ավարտման պահի հետ կապված խնդիրներին կարելի է անդրադառնալ միայն հանցագործության էության (հանցակազմի տարրերի) մասին մոտեցումների վերջնական հստակեցումից հետո:

Ողջունելով մի շարք այլ հոդվածների ապաքրեականացման առաջարկությունը, պետք է միննույն ժամանակ նշել, որ տարօրինակ է սույն նախագծի հիմնավորումների լույսի ներքո 186.1, 188.1, 197, 198, 204, 208, 209, 210, 211 և 260 հոդվածների ուժը կորցրած ճանաչելու գաղափարը, որը հիմնականում վերաբերվում է ակցիզային փաստաթղթեր կեղծելուն ու դրանք օգտագործելու կանոնները խախտելուն, առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացմանը, ապրանքային նշաններ ապօրինի օգտագործելուն և այլն: **Նշվածի համար առնվազն անհրաժեշտ է համապատասխան հոդվածներով Հայաստանյան պրակտիկայի վերլուծություն և ուսումնասիրություններ, քանի որ ակցիզներ կեղծելը իր բնույթով ավելի վտանգավոր հանցագործություն պետք է համարվի, քան հարկեր վճարելու հետ կապված հաշվարկներում (նույնիսկ չարամտորեն) տվյալների խեղաթյուրումը:**

Եվ վերջում անհրաժեշտ է ուշադրություն հրավիրել ևս մեկ հանգամանքի վրա: ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն

*«Սույն օրենսգրքի 188-րդ, 189-րդ, 193-րդ, 194-րդ և 205-րդ հոդվածներով նախատեսված արարքները կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությանը պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները:»*

Այսինքն, գործող քրեական օրենսգրքը իրականում նախատեսում է արդեն **նախազգուշացման ռեժիմ**, այսինքն եթե հարուցված է քրեական գործ 205 հոդվածի հիման վրա, անձը կարող է վճարել առաջադրված հարկային պարտավորությունները, տույժերը, տուգանքները և այլն, և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվում է: Նշված հնարավորությունը ամրապնդում է 205 հոդվածով նախատեսված գործիքակազմը՝ որպես հարկահավաքության գործիք կիրառելու հնարավորությունը: Ավելին պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ անձը նաև բանավոր նախազգուշացվում է քրեական հետապնդման հնարավորության մասին, եթե չվճարի ստուգման ակտով առաջադրված գումարը և սկսի վիճարկման գործընթաց (առաջարկում են վճարել, հետո բողոքարկել, և եթե կհաղթի, «կարող է հետ ստանալ»):

Ելնելով ամբողջ վերոգրյալից վստահորեն կարող ենք ասել, որ այս փոփոխությունը չի բխում ՀՀ կառավարության գործունեության ծրագրի և ՀՀ Նախագահի թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի և դրանից բխող միջոցառումների ցանկի» **էությունից:**

### Առաջարկություններ

Որպես ՀՀ կառավարության գործունեության ծրագրի և ՀՀ Նախագահի թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի և դրանից բխող միջոցառումների ցանկի» էությունից բխող ամբողջական փոփոխություն առաջարկում ենք **ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի ապաքրեականացումը՝ նախագծով նախատեսված մնացած հոդվածներին զուգահեռ:**

Որպես սահմանափակ «այլընտրանքային» տարբերակ առաջարկում ենք հետևյալը՝

1. բարձրացնել խոշոր և առանձնապես խոշոր համարվող գումարի շեմը խոշոր չափ սահմանել 100-500 մլն ՀՀ դրամ, իսկ առանձնապես խոշոր չափ 500 մլն ՀՀ դրամ գերազանցող գումարը (մեկ տարվա ընթացքում), դրանով հնարավորություն տալ գերփոքր և փոքր բիզնեսի նկատմամբ չկիրառելու հարկահավաքության այս գործիքը<sup>2</sup> (նրանց համար պրակտիկորեն ապաքրեականացնելով հանցակազմը),
2. ուժը կորցրած ճանաչել քրեական օրենսգրքի 189 հոդվածի 5-րդ մասը (կամ այդ հոդվածի այդ մասում ուժը կորցրած ճանաչել 205-րդ հոդվածի վրա հղումը), ինչի արդյունքում 205 հոդվածով հարուցված գործերը քննվեն մինչև վերջ՝ կամ կլինի արդարացում (հնարավոր փոխհատուցման պահանջով), կամ քրեական պատասխանատվության առաջադրում և դատապարտում (եթե առկա են հիմքերը): Նշվածի արդյունքում էականորեն կսահմանափակվի 205-րդ հոդվածը որպես ուղղակի հարկահավաքության (որպես սպառնալիքի) գործիք կիրառելու հնարավորությունը:
3. Քրեական դատավարության օրենսգրքում սահմանել քրեական գործի կասեցման նոր ինստիտուտ. այն է ստուգման ակտի բողոքարկման պահից կասեցնել քրեական գործը մինչև դրա վերջնական լուծումը: Որպես տարբերակ առաջարկվում է վարչական դատարանին տալ իրավասություն (միգուցե քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգով) կասեցնել քրեական գործի քննությունը, որպես ապահովման միջոց կողմի միջնորդությամբ կամ իր հայեցողությամբ: Կասեցման մասով հնարավոր են մի շարք գործիքներ, և կոնկրետ գործիքի ընտրությունը նույնպես կապված կլինի համապատասխան հայեցակարգային մոտեցումների հետ:
4. Ֆինանսների նախարարության ստորաբաժանումներում բացառել 205-րդ հոդվածով գործի քննության իրավասությունը (այն փոխանցել քննչական կոմիտեին), քանի որ առկա է ակնհայտ շահերի բախում (ֆինանսների նախարարությունը պատասխանատու է բյուջեի կատարման համար, և համապատասխան գործիքի առկայության պայմաններում, նույնիսկ ոչ դիտավորյալ փորձ է կատարվելու չարաշահել այդ գործիքը՝ զուտ ֆիսկալ գործառույթը առավել «արդյունավետ» իրականացնելու համար):

<sup>2</sup> Իրականում առավել արդյունավետ լինելու համար անհրաժեշտ է շեմը սահմանել 100 մլն և 500 մլն տարեկան:

Առաջարկում ենք 205-րդ հոդվածի հետևյալ խմբագրությունը.

Հոդված 205. Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց խուսափելու նպատակով հաշվետվություններ չներկայացնելը կամ դրանք դիտավորյալ խեղաթյուրելը՝

1. Հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները (այսուհետ՝ հարկային պարտավորություններ) վճարելուց խուսափելու նպատակով օրենսդրությամբ նախատեսված հաշվետվություններ, հաշվարկներ կամ հարկման հիմք հանդիսացող պարտադիր այլ փաստաթղթեր չվարելը, դրանք չներկայացնելը կամ նշված փաստաթղթերի մեջ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ դիտավորյալ մտցնելը, որի արդյունքում մեկ հարկային տարվա ընթացքում թաքցվել է խոշոր չափերի հարկային պարտավորություններ՝ պատժվում է տուգանքով՝ դիտավորյալ չվճարված հարկերի չափով, կամ ազատագրկամաբ մինչև երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որի արդյունքում մեկ հարկային տարվա ընթացքում թաքցվել է առանձնապես խոշոր չափերի հարկային պարտավորություններ՝ պատժվում է ազատագրկամաբ՝ հինգից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:

3. Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուր հազարապատիկից հինգ հարյուր հազարապատիկը չգերազանցող գումարը, իսկ առանձնապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ հարյուր հազարապատիկը գերազանցող գումարը:

4. Եթե վարչական ստուգման արդյունքում անձին առաջադրվել է հավելյալ հարկային պարտավորություն, համապատասխան տույժեր և տուգանքներ, ապա դա բացառում է սույն հոդվածով նույն դրվագների (արարքների) հետ կապված քրեական հետապնդման իրականացումը:

[այլընտրանքային տարբերակ] 4. Անձի արարքում հանցակազմը բացակայում է, եթե նույն դրվագներով առկա փաստաթղթերի և այլ հիմքերով ձեռք բերված տվյալներով ստուգման արդյունքում նախկինում առաջադրվել է հավելյալ պարտավորություններ և/կամ համապատասխան տույժեր և տուգանքներ: